№ 214 Դեկտեմբերի 2 (14) 1880 Դեկտեմբերի 2 (14) № 214

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թւին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրօգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Նամակ Երեւանից։ Նամակ Դուշէթից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Միացեալ Նաւատորմ։ Անգլիա։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Մուհարրէմ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Նոյեմբերի 23

Բնականից անընդունակ լինելով փոքր բաները մեծացնելու, պարտք եմ համարում ինձ, գոնէ մեծ բաները փոքրացնելով հաղորդել լսածներս։—Կարապետ վարդապետ Այվազեանը, որը Երեւանի արքունի դպրոցներում կրօնի և հայոց լեզուի ուսուցիչ էր, շաբաթական 80 դասով, և թեմական տեսուչ Երեւանի և Կարսի նահանգների, նշանակվել է այժմ Շուշու կօնսիստորիայի նախագահ և օգնական Անդրէաս եպիսկոպոսի. ցանկանում ենք յաջողութիւն։ Սրա տեղը արքունի դպրոցներում շաբաթական 30 դասով, տրվել է Գայ. դպրոցի տեսուչ և շաբաթական 20 դաս ունեցող հայր Յովսէփ քահ. Մելեանցին, որ այսուհետեւ կունենայ շաբաթական մօտ 50 դաս, կը մնայ տեսուչ և կը լինի քահանայ մօտ 100 տուն ժողովրդի. սրան էլ ենք ցանկանում յաջողութիւն։—Թեմական դպրոցի ժրաջան հոգաբարձու, քաղաքային վարչութեան պատուական անդամ, «Պսակ» շաբաթաթերթի տաղանդաւոր խմբագիր, սեփական տպարանատէր և Գայ. օր. դպրոցի ուսուցիչ պ. Պապաջանեանցը նշանակվել է ուսուցչապետ Էջ. ճեմարանին, որ եկող սեպտ. երկու տարի ժամանակով կը դասախօսէ վերացական և բարոյական փիլիսոփայութիւն,—առաջին տարին շաբաթական 4 դաս, երկրորդ տարին շաբաթական 8 դաս, տարեկան 2000 րուբլի ռոճիկ ստանալով ազգասիրաբար. սրան ևս ցանկանում ենք յաջողութիւն։—Երեւանի Թեմակալ Եղիազար արքեպիսկոպոսը, որ յընթացս եօթն տարվայ թեմական դպրանոցի կնքով կեղծ վկայականներ վաճառելով շատերին բաղդաւորացրեց և ինքն էլ բաղդաւորվեցաւ ողորմութեամբն ապաշնորհից՝ Երեւանի կօնսիստորիան ըստ ամենայնի բարեկարգելուց զկնի, փոխվում է յանապատ տեղիս և գալիս է նորա տեղը գրաւելու սրբազան Մեսրովպ արհին Սմբատեանց, որի բարեխիղճ գործունէութիւնը վաղուց յայտնի է երեւանցիներիս. ցանկանում եմ գնացողին էլ, եկողին էլ բարի ճանապարհ և ժողովրդեանս համբերութիւն։

Այս ամսվայ ընթացքում հանգեան ի Տէր՝ Մկրտիչ աղա Սաղաթելեանցը և Գասպար աղա Աֆրիկեանցը. առաջինը 100 րուբլի. կտակեց քաղաքիս հայ դպրոցներին, երկրորդը՝ 200 րուբլի. մի երրորդն էլ կտակել է 600 րուբլի դպրոցներին և կլտաչէն եկեղեցուն, ինքն էլ հանգչելու վրա է. ցանկանում եմ երկնից արքայութիւն իրանց հոգուն և երկար կեանք իրանց ժառանգներին։—Ամսոյս 15-ին արեգական զով ճառագայթների տակ, քաղաքային պարտիզում, պ. Նահանգապետի թոյլտուութիւնով, Սահականուշեան օր. դպրոցի օգտին, աշակերտուհիների ձեռագործները հասարակութիւնից հաւաքած իրեղէնների հետ վիճակարկվեցան և թէյ ու սուրճ տրվեցաւ հիւրերին. 263 րուբլի վիճակից գոյացաւ, 321 րուբլի սուրճ ու թէյից. որից 55 րուբլի գնդապետ Անդրէեվը ընծայեց և 10 րուբլին տիկին Սաշենկայ Եղիազարեանցը. ընդամենը՝ ծախսը հանած, զուտ արդիւնք մնաց 573 րուբլի. ցանկանում եմ գործող, մասնակցող և համակրող անձինքներին աւելի կարողութիւն և մանաւանդ մեծ. օր. Թ. Մելիք-Ազամալեանին, օր. Վ. Կրիժանօվսկուն և տիկին Թումանեանին ցանկանում եմ այն ամենը, ինչ որ իրանց սիրտը կը ցանկայ իրանց համար։—Լսում եմ, որ թեմական դպրանոցի գերամեծար հոգաբարձուները բարեհաճել են իրանց նախորդների օրով ժողոված գումարից՝ առանց բարձրագոյն հոգ. իշխ. գիտենալուն, ծախսել մօտ 3500 րուբլի և մտադիր են մնացած գումարն էլ մինչեւ իրանց ժամանակի լրանալը ծախսել վերջացնել. որովհետեւ ոչինչ չեն կարողանում ստանալ այն արդիւնքներից, որ Վ. Կաթողիկոսն է շնորհել դպրանոցին. ցանկանում ենք կատարեալ հանգստութիւն մեր հոգաբարձու աղաներին։—Արդեօք գիտէ Վ. Կաթողիկոսն ու Ս. Սինօդը, որ իրանց տուած արդիւնքները բոլորովին ցամաքել են ի մեծ վնաս թեմական դպրանոցին. գիտեն արդեօք, որ թէ գործակալները, թէ ուխտատեղիների երէցփոխներն ու քահանաները և թէ քաղաքիս զանազան աստիճանի երէցփոխները ոչինչ չեն տալիս թեմական դպրանոցին այն արդիւնքներից՝ որ յատկացած են «ի պաշտպանութիւն թեմական դպրանոցին»։ Եթէ չը գիտեն, ցանկանում ենք որ գիտենան և շտապեն յարգել տալ իրանց հրամանները….

Նորայր

ՆԱՄԱԿ ԴՈՒՇԷԹԻՑ

15 Նոյեմբերի

Որովհետեւ «Մշակի» 184 համարի մէջ դուշէթեցոց 39 ստորագրութիւններով նամակը մասամբ դիպչում է ինձ, սուտ դուրս բերելով իմ նոյն լրագրի 152 համարի մէջ տեղեկութիւնները, բարեկրօն գործակալ Բէգիջանեանցի մասին, վասնորոյ, ի սէր ճշմարտութեան, խնդրում եմ մի քանի խօսքերին տեղ շնորհէք ձեր լրագրի մէջ։

Յիշեալ նամակը դուշեթեցիք չեն գրել և խեղճերը մինչեւ այսօր էլ նորա բովանդակութիւնը չը գիտեն, որովհետեւ ամենին յայտնի է, որ Դուշէթում կը գտնվեն միայն երկու կամ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՒՀԱՐՐԷՄ, ԿԱՄ ԻՄԱՄ ՀՈՒՍԷՅՆԻ ՍՊԱՆՈՒՄԸ

Այս օրերը բոլոր Անդրկովկասում Շիէ կոչված մահմեդականների մէջ մի մեծ կրօնական տօն է կատարվում ի յիշատակ իմամ Հիւսէյնի սպանման, որ մեր հայերիս մէջ յայտնի է «շախսէյ, վախսէյ» անունով, և որը աւելի ճիշտ պէտք է ասել «շահ-հուսէյն, վահ-հուսէյն»։ Այդ տասնօրեայ սգաւորական հանդէսը ես չեմ նկարագրի, որովհետեւ դա մասամբ մեզ յայտնի է և մասամբ էլ այլ և այլ երկիրներում միօրինակ չէ կատարվում. իսկ այստեղ ես կը փափաքէի մեր ազգայնոց ներկայացնել պատմութիւնից այն անցքը, որ հիմն և առիթ է այդ մեր աչքի առաջ ամ ըստ ամի կատարվող «թէազիա կամ ղաթըլ» կոչուած մահմետական հանդիսին։

Պատմութիւնից պարզ յայտնի չէ, թէ ինչ էր բուն պատճառը՝ արդեօք չը հասկացողութիւն, թէ կամքի տկարութիւն կամ մի այլ ինչ, որ Մահմետը մեռնելիս իրանից յետոյ մնացած ահագին իշխանութեան համար մի ժառանգ կամ յաջորդ չորոշեց, մի հանգամանք, որ յետոյ մեծամեծ կռիւների և արիւնհեղութեանց առիթ եղաւ հէնց նոյն իսկ ինքնակոչ մարգարէի ջերմեռանդ աշակերտների մէջ։ Արաբ էմիր-մարգարէն փչեց հոգին թէ ոչ, իսկոյն վէճ ծագեց, թէ ով պէտք է ընդհանուր աղօթքին առաջնորդողը լինի, մինչեւ որ Ալին երկդիմի խոհեմութեամբ հանգստացրեց վրդովված միւսուլմաններին՝ ասելով «ոչ ով չէ առաջնորդ, այլ այն սուրբը պիտի լինի ձեր առաջնորդը կենդանի ժամանակ և մեռած ժամանակ», և «նամազը» սկսեց նորա գագաղի մօտ։ Մահացելու թողած ժառանգութիւնը խիստ մեծ էր, քան թէ նա կարող լինէր այդպիսի վերացեալ համոզկիր ֆրազներով դադարել հրապուրանքի առարկայ լինելուց։ «Անսար և մուհաջիր» այսինքն օգնական դաշնակիցք և հաւատացեալ ընկերք կոչված բազմաթիւ կողոպտով գիրացած և օր քան զօր աւարի առաւել ևս ագահացած արաբ իշխաններից և զօրագլուխներից բաց այնտեղ կային երկու զոյգ աչքեր, որոնք մի առանձին վստահութեամբ և ախորժանօք նայում էին այդ հարուստ և փառաւոր ժառանգութեան վրա, որոնցից իւրաքանչիւրը իր իրաւանց վրա յենելով անկասկած սպասում էր թէ ինքը կը յաջորդէ Մահմետին։ Այդ երկու անձինքն էին՝ Ալին՝ Մահմետի փեսան և Աբուբէքրը՝ Մահմետի աները։ Թէև Մահմետը ունեցել է երեք տղայ և չորս աղջիկ, բայց տղաներից ոչ մէկը երկու տարուց աւելի չէ ապրել, իսկ աղջիկները, թէև չորսն էլ ամուսնացած էին, բայց երեքը մեռան դեռ իրանց հօր կենդանութեան ժամանակին, և միմիայն Ֆաթման՝ Ալիի կինը կենդանի էր իր հայրը մեռնելիս։ Թէ Ալին և թէ Աբուբէքրը Մահմետին անգին ծառայութիւններ էին մատուցել և նորա ամենահաւատարիմ հետեւողներիցն էին ու նորա ամենամտերիմ բարեկամները։ Շատ հաւանական է, որ հէնց այդ պատճառով որ մարգարէն երկուսին էլ հաւասար սիրում և յարգում էր, չը կարողացաւ մէկին միւսից վեր դասել և իր ժառանգութեանը տէր նշանակել. բայց երեւում է, որ մասնաւոր խօսակցութեանց մէջ առանձին երբեմն մէկին, երբեմն միւսին խօսք տուած լինի իրան յաջորդելու մասին. մահմետական գիտնականները այդ նիւթի վրա անվախճան վէճեր են ունեցել, որոնք մինչեւ ցարդ ևս դեռ չեն վերջացած։ Ինչ և իցէ Մահմետի աշակերտաց մեծամասնութիւնը ինչ ինչ պատճառներով, որոնց շարքում ծանր կշիռ ունէր Աբուբէքրի տոհմական ազնուութիւնը, որից զուրկ էր իբրև խեղճ, անտերունչ և որբ՝ Մահմետի հովանաւորութեան տակ սպասաւորի և արբանեակի պէս մեծացած Ալին, խալաֆաթը արժան դատեց յանձնել մարգարէի աներոջը, և Աբուբէքրը եղաւ առաջին «խալիֆա», այսինքն յաջորդ։ Այս վերջինի մեռնելուց յետոյ դարձեալ չը յաջողվեցաւ Ալիին նստել խալիֆաթի գահի վրա, այլ Օմարը, որ Մահմետի մի ուրիշ կնոջ հայրն էր, յաջորդեց Աբուբէքրին, սորա իսկ յանձնարարութեամբ և կարգադրութեամբը։ Մինչեւ անգամ Օմարի մահուանից էլ կրօնական և քաղաքական իշխանութեան ղեկը Ալին տեսաւ Օսմանի ձեռքն անցնելիս և չը կարողացաւ ոչ մի կերպով նրան տիրել։ Միմիայն վերջապէս Օսմանի սպանումից յետոյ, որ եղաւ մի շփոթութեան մէջ և որի գործելու մասին մինչեւ այսօր էլ դժուար է եղած Ալիի վերայից կասկածի աղտը մաքրել, նստեց Օմարի հնարած տիտղոսով իբրև Ամիր-էլ-մէօմինին, այսինքն իշխան հաւատացելոց, ըստ Սիւննեաց իբրև չորրորդ, իսկ ըստ Շիէից իբրև առաջին օրինաւոր և վաւերական խալիֆա Մահմետի աղջկան Ֆաթմէ-զահրայի ամուսին Ալի իբնը Աբութալըբը։ Երկար ժամանակ անհամբերութեամբ սպասելով վերջ ի վերջոյ—ով գիտէ թէ ինչ ներելի կամ աններելի միջոցներով—բաղձացած իշխանութիւնը Ալին ձեռքը գցելուց յետոյ էլ չը վայելեց այն փառքի երեւակայած քաղցրութիւնը. մանաւանդ Մահմետի այրի կինը Այիշան էր, որ Զուբէյր և Թալհա զօրապետների հետ միաբանելով Ալիի փառաց և իշխանութեան բաժակի մէջ շարունակաբար լեղի էր քամում, մինչեւ որ մի ֆանատիկոս 661 թւի սկզբումը նրան (Ալիին) էլ դաշոյնի զոհ արաւ։ Մինչդեռ Ալին իր կենդանութեան ժամանակ սոսկ 4 տարի վարած իշխանութեան միջոցին այս կողմում պատերազմում էր ներքին դժուարութեանց հետ, այնտեղից Սիւրիայի (Դամասկոսի) կողմից սպառնալի գլուխ էր բարձրացրել այնտեղի կուսակալ Մուավիան, որի մի քոյրը Նաբիրա բընթը Աբի-սոֆիան Մահմետի մի կինն էր եղած։ Խաղաղասէր և մեղմ Հասանը, Ալիի անդրանիկ որդին, թէպէտ և իր հօր մահուանից յետոյ իր կողմնակիցների ընդհանուր հաճութեամբ յաջորդեց նորան, բայց համոզված լինելով, որ այդ վտանգաւոր գահը Մուավիայի միահեծանական գաղափարների դէմ պաշտպանելու անկարող պիտի լինի, յօժարութեամբ հրաժարվեցաւ խալիֆայութիւնից։ Բայց ոչ այդպէս նորա կրտսեր եղբայրը Հուսէյն, որը թէպէտ և բորբոքված ծարաւում էր խալիֆայութեան փառաւոր իշխանութեանը, բայց չունէր այնքան քաղաքագիտական հմտութիւն և շրջահայեցութիւն, որով կարողանար չափաւորել իր ցանկութիւնը և զոհ չը գնալ իր անսանձ կրից, ինչպէս հէնց իրանք մահմետականք պախարակելով նորա անզուսպ փառամոլութիւնը՝ ասում են «քուր ու քուրանէ մէրօվ դէր քէրբէլա. թա նէ յըֆթի չուն Հուսէյն էնդէր բէլա». այսինքն «կոյր ու կուրօրէն մի երթար քէրբէլա, որ Հուսէյնի պէս չի ընկնես փորձի մէջ»։